

## Գիտական ոլորտում ծախսերը չեն կրճատվի

2009—ը ոլորտի համար եղել է արդյունավետ տարի

Պետությունը գիտության ոլորտին հատկացված գումարների կրճատում գալիք տարում չի նախատեսվում, երեկ ասաց ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը: Երեկ գիտության պետական կոմիտեի նախագահը, ամփոփելով տարվա ձեռքբերումներն ու իրականացված միջոցառումները, նշեց, որ նախ մշակվել են մի շարք իրավական ակտեր, որոնք ներկայացվել են կառավարությունն եւ այժմ քննարկման փուլում են: Մասնավորապես բազմաթիվ քննարկումների է արժանացել «Գիտության ոլորտի զարգացման ռազմավարությանը հավանություն տալու մասին» որոշման նախագիծը: Որոշակի քննարկման փուլ անցնելուց հետո մարտ ամսին կառավարության կողմից կհաստատվի «ՀՀ երկաստիճան գիտական աստիճանաշնորհման համակարգի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» որոշման նախագիծը, որը կընդգրկվի ՀՀ կառավարություն **2010** թ. միջոցառումների ծրագրում: Մշակվել է նաեւ գիտական կենտրոնների ձեւավորմանը հավանություն տալու մասին» նախագիծը, ըստ որի՝ նախատեսվում է գալիք տարում ստեղծել հայկենսատեխնոլոգիայի, երկրաֆիզիկական մոնիտորինգի, ԵրՃՇՊՀ ջրային հիմնահարցերի եւ հիդրոտեխնիկայի, ռազմաթշկական գիտական կենտրոնները:

Այս տարի, որպես ձեռքբերում, գիտության կոմիտեի նախագահը մատնանշեց գիտության երիտասարդացմանն ուղղված միջոցառումների շարքը: Մասնավորապես, կազմակերպվել են երիտասարդական դպրոցներ, որոնց մասնակցել է ավելի քան **150** երիտասարդ գիտնական: Բացի այդ, երիտասարդ գիտաշխատողներին հատկացվել է ֆինանսական աջակցություն միջազգային գիտաժողովներին մասնակցելու համար, որին հետեւել է նաեւ նրանց շրջանում դրամաշնորհային մրցույթի կազմակերպումը: Ֆինանսավորվել են նաեւ **17** թիմային ծրագրեր գիտության տարբեր ոլորտներում, որին մասնակցել են մինչեւ **35** տարեկան գիտնականներ: «Մա եւ կարեւոր միջոցառում եմ համարում, քանի որ մեզ մոտ նկատվում է գիտության ծերացում եւ նմանատիպ մրցույթի կազմակերպումը կնպաստի ապագայում ընտրել խելացի գիտնականների: Թիմային աշխատանքների կատարումը հնարավորություն կտա ընտրել այն գիտնականներին, որոնք գիտության ոլորտում ղեկավարման ձիրք ունեն»,—նշեց Սամվել Հարությունյանը: Նա մեծ նվաճում համարեց գիտական փորձագիտական անկախ համակարգի ստեղծումը, ինչը **2009**թ. փորձարկվեց Հայաստանում հայ-ֆրանսիական համատեղ ծրագրի եւ հայ—ամերիկյան երիտասարդական ծրագրի շրջանակներում: Այս համակարգի գործարկումը Սամվել Հարությունյանի գնահատմամբ, բավականին արդյունավետ եղավ, ինչը հնարավորություն տվեց պարզելու համակարգը Հայաստանում կարող է աշխատել տարբեր ծրագրերի ֆինանսավորման պարագայում: Ստեղծվել է նաեւ արտասահմանում աշխատող հայ գիտնականների տվյալների շտեմարան, որտեղ ընդգրկված են ավելի քան **1000** գիտնականների տվյալներ: Անցկացվել են տարբեր թեմաներով քննարկումներ, կլոր սեղաններ, որոնց ընթացքում ներկայացվել է սինքրոտրոնային ճառագայթման օգտագործման կենտրոնի «Քենդլ նախագծի բիզնես պլանը» եւ Ռուս—հայկական համալսարանի հեղինակային խմբի կողմից մշակված կիսահաղորդչային նանոէլեկտրոնիկայի գիտահետազոտական ծրագիրը:

Սամվել Հարությունյանի խոսքերով՝ շատ կարևոր որոշում էր գիտական հիմնարկների տնտեսական ծախսերի ավելացումը: Մինչև **2009թ.** գիտական հիմնարկների բյուջեի մոտ **87** տոկոսը ծախսվում էր որպես աշխատավարձի ֆոնդ, ինչը նորմալ երեւոյթ չէր: Կոմիտեի նախագահի դիտարկմամբ, սովորաբար գիտական հիմնարկների նորմալ գործունեության համար աշխատավարձի ֆոնդը ընդհանուր բյուջեի **55—60** տոկոսը պետք է կազմի: Կոմիտեին հաջողվեց տնտեսական եւ այլ ծախսերը մեծացնել: Այդ ֆինանսական աջակցությունը հնարավորություն տվեց հոգալ ոչ միայն կոմունալ ծախսերը, այլև լուծել այդ հիմնարկների ջեռուցման խնդիրը: Նա հիշեցրեց, որ ձմռան ամիսներին գիտական ինստիտուտները հիմնականում մատնված էին պարապուրդի՝ ջեռուցում չունենալու պատճառով: Այժմ այդ հիմնարկներից շատերը կարող են նաև ձմռանը աշխատել: Որպես գերակայություն, կոմիտեի նախագահը մատնանշեց միջազգային համագործակցության գործոնը: Այս առումով կոմիտեի նախագահը տարին համարում է բեղուն, քանի որ այս ընթացքում ձեռք են բերվել բազմաթիվ պայմանավորվածություններ միջազգային կազմակերպությունների հետ՝ համատեղ մրցույթներ հայտարարելով: Գալիք տարում կոմիտեն պատրաստվում է ընդարձակել միջազգային կապերը, նախատեսված է պայմանագրեր ստորագրել Ռուսաստանի, Բելառուսի եւ Գերմանիայի համապատասխան նախարարությունների հետ: Դրամաշնորհային մրցույթներին եկող տարի կմասնակցեն նաև ԼՂՀ—ի գիտնականները: Սեւծովյան համագործակցության շրջանակներում կծավալվի սերտ համագործակցություն: Կմշակվի եւ կառավարությանը կներկայացվի գիտության զարգացման առաջիկա **5** տարիների ռազմավարական ծրագիրը:

Լուսինե ՆԱԶԱՐՅԱՆ

x. Y³ Á³ ÚÁ āÇ ³ ½¹Ç . Çi áóĀŪ³ Yª 2010 Āi³ Ī³ YÇ Íñ³ . ñ»ñÇ íñ³

¶ Çi áóĀŪ³ Y áĤñi Ç μ³ ñ»÷ áĒáoŪY»ñÇ áóŌóáoĀŪ³ Ūμ . Çi áóĀŪ³ Y á»i³ Ī³ Y ĪáŪÇi »Ç ĪáŌŪÇó 2009 Ā. Çñ³ Ī³ Y³ ói»Ē »Y ŪÇ β³ ñù ŪÇçáo³ éáoŪY»ñ: ùÇY³ Yē³ i Yī »ē³ Ī³ Y x. Y³ Á³ ÚÁ āÇ ³ ½¹Ç Y³ »ō 2010 Āi³ Ī³ YÇ Íñ³ . ñ»ñÇ »ō μĪāōç»Ç íñ³ , Ñ³ í³ i³ ó³ Í ĸ ¶ Çi áóĀŪ³ Y á»i³ Ī³ Y ĪáŪÇi »Ç Y³ Ē³ . Ñ³ ē³ Ūi »ĒĐ³ ñáoĀŪáoŪ³ YÁ:

² Ūēñ ŠŌ³ ēi³ ñĪ | ³ ĪáoŪμáoŪ ³ Ū÷ á÷ »Ēái ĪáŪÇi »Ç 2009 Ā . áñíáoŪ»áoĀŪáoŪ³ ē³ Ūi »ĒĐ³ ñáoĀŪáoŪ³ YÁ Ū³ i Y³ Yβ»Ē ĸ Y³ »ō 2010Ā-Ç Íñ³ . ñ»ñÁ:

¶ Çi áóĀŪ³ Y á»i³ Ī³ Y ĪáŪÇi »Ç Y ÁYÁ³ óÇi i³ ñi³ Ñ³ Ū³ ñ Ñ³ i Ī³ ói³ Í ĸñ 8 ŪĤñ¹ 300 ŪĒÝ¹ ñ³ Ū, 2010 Āi³ Ī³ YÇY »ōē ĪáŪÇi »Ç μĪāōç»áoŪ Īñ×³ i áóŪY»ñ ā»Y ĪÇYÇ, Ēáēi³ ó»Ē »Y ĐĐ Y³ Ē³ . Ñ³ Y³ áó í³ ñā³ á»i Á: ĒēĪ¹ ³ Yβ³ Y³ ĪáoŪ ĸ, áñ 2010- Ç Íñ³ . ñ»ñÁ »ōē Ñ³ çáoáoĀŪ³ Ūμ ĪÇñ³ Ī³ Y³ Y, íēi³ Ñ ĸ ĪáŪÇi »Ç Y³ Ē³ . Ñ³ ē³ Ūi »ĒĐ³ ñáoĀŪáoŪ³ YÁ:

² Y¹ñ³ ¹³ éY³ Ēái 2009 Āi³ Ī³ YÇY Çñ³ Ī³ Y³ ói³ Í Īñ³ . ñ»ñÇYª Y³ Ū³ ēY³ íáñ³ á»ē Ī³ ñ»ōáñ»ó . Çi áóĀŪ³ Y »ñÇi³ ē³ ñ¹³ óŪ³ Y³ áóŌóí³ Ī ŪÇçáo³ éáoŪY»ñÁ:

ŠŌ»½ Ūái . Çi áóĀŪ³ Y Ī»ñ³ óáoŪ ĸ Yī³ i íáoŪ »ō YŪ³ Y³ i Çá Īñ³ . ñ»ñÇ Çñ³ Ī³ Y³ óáoŪÁ, Ñáoēái »Ū, ĪYá³ ēi³ Ç³ á³ . Ñ³ ŪáoŪ ÁYi ñ»Ē Ē»Ēá »ñÇi³ ē³ ñ¹Y»ñÇ βñç³ YáoŪ . Çi áóĀŪ³ Y ĪÇ¹»ñY»ñĪ Ūñ³ Yù, ÑáoŪé áóŪ»Ū, ³ á³ . Ñ³ ŪáoŪ ĪĪY»Y Ū»ñ ÇYēi Çi áoi Y»ñÇ i YŪñ»YŪ»ñÁ »ō . Çi áóĀŪ³ Y³ ē³ ç³ i³ ñ³ ³ βĒ³ i áóŪ»ñÁ |:

Ī áŪÇi »Y 2009- ÇY Ñ³ Ū³ . áñí³ Īó»Ē ĸ ŪÇ β³ ñù ŪÇç³ ½³ ÇY Ī³ éáoŪY»ñÇ Ñ»i , »ō ē³ Ūi »ĒĐ³ ñáoĀŪáoŪ³ Y³ Ū³ Ñ³ Y. ³ Ū³ YúÁ ĪáŪÇi »Ç . »ñ³ Ī³ áóŌóáoĀŪáoŪY»ñÇó Ū»ĪY ĸ Ñ³ Ū³ ñáoŪ: í³ ñÇY áĤñi Ç Ñ³ Ū³ ñ . Y³ Ñ³ i »Ēái μ»ŌáoŪ »ō Ū³ i Y³ Yβ»Ēái ĪáŪÇi »Ç ÁYÁ³ óÇi i³ ñi³ μáĤñ Ó»ēμ»ñáoŪY»ñÁª ē³ Ūi »ĒĐ³ ñáoĀŪáoŪ³ YÁ Ēáēi áí³ Y»ó, áñ Ó³ ĒáoáoŪY»ñ »ōē »Ō»Ē»YĪ

ŠĐÇŪY³ ñ³ ñ Ñ»i³ ½áí áóĀŪáoŪY»ñÇ ÑÇŪY³ ¹ñ³ ŪÇ Ñ»i Ū»Yù 2008- ÇY Ñ³ Ū³ . áñí³ ĪóáoĀŪ³ Y ÑáoŪ³ . Çñ ĪYù»óÇYù, áñÁ á»i ù ĸ 2009-ÇY í»ñ³ Īí»ñ á³ Ū³ Y³ . ñÇĪ ñ³ βñç³ Y³ ĪY»ñáoŪ Ū»Yù á»i ù ĸ Ñ³ Ū³ yÇY³ Yē³ íáñŪ³ Y i³ ñμ»ñ³ Īái Īñ³ . ñ»ñ Çñ³ Ī³ Y³ óY»ÇYù: ³ Ū i³ ññÇY³ Ī Çñ³ íÇ×³ Ī ēi »ŌĪí»ó: á³ ñ½í»ó Ū»Yù Ū»ñ μĪāōç»áoŪ . áóŪ³ ñ áóŪY»Yù, á³ i ñ³ ēi »Yù Īñ³ . ñ»ñ Çñ³ . áñí»Ē éáoē³ ēi³ YÇ Ñ»i , μ³ Ūé éáoē³ ēi³ YÇ μĪāōç»Ç Īñ×³ i Ū³ Y á³ i ×³ éái Īñ³ . ÇñÁ áí³ ñáoŪ³ ó³ Yù Çñ³ Ī³ Y³ óY»Ē |:

ĒēĪ ÁY¹Ñ³ Yñ³ á»ē 2009 Ā-Çó ē³ Ūi »ĒĐ³ ñáoĀŪáoŪ³ YÁ . áñ ĸ: ø³ YÇ áñ . Çi áóĀŪáoŪ³ μ³ ó Ñ³ Ū³ Ī³ ñ. ĸ »ō ÷ áññ á»i áóĀŪáoŪáoŪ ÑY³ ñ³ íáñ ā ĸ Ēáōñç ½³ ñ. ³ óáoŪ, áóēi Ç 2010-Ç Íñ³ . ñ»ñÇ Ñ³ Ū³ ñ, ē³ Ūi »ĒĐ³ ñáoĀŪáoŪ³ YÇ Ēáēuái, ³ é³ çY³ ŪÇY ĸ ŪÇç³ ½³ ÇY Ī³ á»ñÇ ³ Ūñ³ áY¹áoŪY áó ÁY¹Ē³ ŪYáoŪÁĪ

àñáβ ÷ á÷ áĒáoĀŪáoŪY»ñ »Y ĪÇY»Ēáo Y³ »ō yÇY³ Yē³ íáñŪ³ Y Ó»ō»ñÇ Ū»ç: 2010- Çó Ī áŪÇi »Y³ YóY»Ēáo ĸ ŪñáoáoĀ³ ŪÇY yÇY³ Yē³ íáñŪ³ Y, ÇYáá »ē ÁY¹áoŪY³ Ī ĸ ŪÇ β³ ñù ½³ ñ. ³ ó³ Í »ñĪ ñY»ñáoŪ:

ēáY³ Đ³ ĪámŪ³ Y

## Վարդագույն ակնոցներով

ԿԳՆ պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը երեկ նախ շնորհակալություն հայտնեց նախագահից ու վարչապետից, որ 2010-ին գիտության բյուջեն չի կրճատվել: Անցնող տարվա ընթացքում գիտության ոլորտը բարեփոխելու նպատակով մշակվել են իրավական ակտերի նախագծեր, ընդունվել են օրենքներ, գիտության երիտասարդացմանն ուղղված քայլեր են ձեռնարկվել, կազմակերպվել են սեմինար-քննարկումներ ու կլոր սեղաններ, միջազգային կազմակերպությունների տված գրանտներով բազմաթիվ ծրագրեր իրականացվել, օրինակ, ստեղծվել է գիտական փորձագիտական անկախ համակարգ: Լսելով այս ամենի մասին հանգամանալի պատմող Սամվել Հարությունյանին, կարելի է մտածել, որ հայրենական գիտությունը որեւէ խնդիր չունի. գիտության ոլորտում ամեն ինչ հարթ է ու սահուն, 2009-ին արձանագրվել են միայն ձեռքբերումներ, բացթողումներ ու թերացումներ չեն եղել: "Ես դժգոհ չեմ, այս ծանր ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում այն, ինչը որ պլանավորել էինք, հիմնականում կարողացել ենք իրականացնել",- տարին ամփոփելով՝ նշեց Սամվել Հարությունյանը: Երբ նկատեցինք, որ խոսվեց միայն հաջողություններից, եւ խնդրեցինք կոմիտեի նախագահին թվարկել նաեւ թերացումները, Հարությունյանը նշեց Ռուսաստանի հիմնարար հետազոտությունների հիմնադրամի հետ 2008-ին կնքված համագործակցության հուշագիրը, որը 2009-ին պետք է վերածվեր պայմանագրի, բայց "մեզանից անկախ պատճառներով, ավելի շատ Ռուսաստանի բյուջեի կրճատման պատճառով, ծրագիրը չկարողացանք իրականացնել": Սամվել Հարությունյանը մի բացթողում էլ հիշեց՝ ինչպես ծրագրվել էր, 2009-ին գիտական կենտրոններ չստեղծվեցին, մեղավորը՝ կրկին ճգնաժամն էր:

### Գիտությամբ թող գիտնականը զբաղվի

"Կառույցի հետ ի՞նչ հակամարտություն ես պետք է ունենամ, որը ինչ-որ գործառույթներ ունի: Իմ հիմնական շահը մեր պետական շահն է, ես ուրիշ շահ չունեմ: Ես ուզում եմ, որ Հայաստանում գիտական աստիճան ստանան նորմալ գիտնականները: Գիտական աստիճանաշնորհման համակարգի բարեփոխումները նպատակամղված են, որպեսզի գիտական աստիճանաշնորհումը նորմալ ընթացք ստանա Հայաստանում, եւ պաշտպանվեն այն մարդիկ, ովքեր ռեալ գիտությամբ են զբաղվում: Հիմնական խնդիրը սա է, ես ոչ մեկի հետ ոչ մի հակամարտություն չունեմ",- երեկ, պատասխանելով Բարձրագույն որակավորման հանձնաժողովի եւ իր ղեկավարած կառույցի միջեւ առկա հակամարտության վերաբերյալ հարցին, նշել է ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը: Իսկ գիտության կոմիտեի փոխարեն գիտության առանձին նախարարության ստեղծման հարցի վերաբերյալ Սամվել Հարությունյանը նշել է, որ այսօր հարցն օրակարգում չէ: "Այսօր այդ հարցի մասին քննարկումներ չկան, ես չգիտեմ ապագայում ինչ կլինի, միգուցե ապագայում նման կառույց ստեղծվի: Էս 2 տարվա ընթացքում 3 նախարար է փոխվել կրթության եւ գիտության, որեւէ մեկի հետ խնդիր չեմ ունեցել: Էն բաները, որ մենք մտադիր էինք, պլանավորել էինք իրականացնելու, նորմալ իրականացրել ենք, ուզում եմ ասել, որ առանձնապես ինձ խանգարող ֆակտորներ չկան մեր՝ կոմիտեի ծրագրերն իրականացնելու համար: Ապագայում ինչ կլինի՝ կլինի նախարարություն, թե կլինի կոմիտե՝ կառավարությանն առընթեր, թե կմնա նախարարության կազմում, դա, անկեղծ ասած, ինձ առանձնապես շատ չի անհանգստացնում": Եթե հանրապետության նախագահն ու վարչապետը հարմար գտնեն ԿԳՆ-ն գիտության նախարարության վերածելու, Սամվել Հարությունյանը կողջունի:

«ԿԱՏԱՐԵԼ ԵՆՔ ՄԵՐ ԱՌՋԵՎ ԴՐՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ»

*Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը թերացումները հեռացրեց իր ղեկավարած կառույցից:*

«ՀՀ-ում գիտության ոլորտի հիմնական պատվիրատուն առայժմ միայն պետությունն է, ինչը նորմալ չէ», - երեկ «Փաստարկ» ակումբում հրավիրված տարեկան ամփոփիչ ասուլիսի ժամանակ հայտարարեց ԿԳՆ գիտության պետական կոմիտեի (ԳՊԿ) նախագահ Սամվել Հարությունյանը: Շարունակելով միտքը՝ նա փաստեց. «Զարգացած եվրոպական երկրներում մասնավոր հատվածը լուրջ ներդրում ունի գիտության ֆինանսավորման հարցում. օրինակ՝ այդ ներդրումները, կախված երկրից, կազմում են 70- 80%, որոշ երկրներում ֆինանսավորումը կատարվում է կեսը պետության կողմից, կեսը՝ մասնավոր հատվածի, իսկ ՀՀ-ում գիտության վրա ծախսվող գումարների 25%-ը կազմում են դրամաշնորհները, 75%-ը՝ պետական ֆինանսավորումը, իսկ մասնավոր հատվածի մասնակցությունը խղճուկ է»:

Այսպիսի տրամադրություններ ի հայտ եկան միայն ասուլիսի վերջում, երբ կրքերը մի փոքր բորբոքվեցին, հարցերն էլ ավելի սրվեցին: Իսկ հանդիպման սկզբում ԳՊԿ նախագահը խոսեց ՀՀ-ում գիտության ոլորտի «վարդագույն երանգներից»: Նա նշեց, որ ԳՊԿ-ն մշակել է բազում իրավական ակտերի նախագծեր, իրականացվել են գիտության երիտասարդացմանն ուղղված մի շարք միջոցառումներ՝ կազմակերպվել են երիտասարդ գիտաշխատողների համար դրամաշնորհային մրցույթներ եւ այլն, գիտական փորձագիտական անկախ համակարգի ձեւավորման շրջանակներում իրականացվել են մի շարք միջոցառումներ, ավելացվել են գիտական հիմնարկների տնտեսական ծախսերը:

Պարոն Հարությունյանը լավատեսական շեշտադրմամբ հիշեցրեց, որ գիտության բյուջեն 2010-ին չի կրճատվի, կմնա 8.3 մլրդ դրամ: 2010-ից ՀՀ-ում անցնելու են գիտության ֆինանսավորման նոր ձևերի: Հստակեցնելով ասվածը՝ կոմիտեի նախագահը նշեց. «Ֆինանսավորման բազային, թեմատիկ, նպատակային ձևերը կպահպանվեն, բայց կլինեն միայն մրցութային ֆինանսավորմամբ՝ անկախ փորձագիտական համակարգի օգտագործմամբ»: Լրագրողների դրդմամբ, Ս. Հարությունյանը խոսեց նաեւ կոմիտեի թերացումներից: Նա, իհարկե, նշեց որոշ թերացումներ՝ միեւնոյն ժամանակ մեղքը որքան հնարավոր է հեռացնելով կոմիտեից: Նա հայտնեց. «ՌԴ հիմնարար հետազոտությունների հիմնադրամի հետ 2008-ին հուշագիր կնքեցինք, որը պայմանագրի պիտի վերածվեր 2009-ին, եւ իրականացվեին համաֆինանսավորմամբ տարբեր ծրագրեր: Բայց նրանց բյուջեն ճգնաժամի պատճառով 30%-ով կրճատվեց, եւ համաֆինանսավորում չեղավ: Մենք պլանավորել էինք 2009-ին 4-5 գիտական կենտրոններ բացել, բայց ճգնաժամի պատճառով դա կլինի 2010-ին»:

ԳՊԿ նախագահը խոսեց նաեւ միջազգային համագործակցությունից՝ նշելով, որ համատեղ ծրագրեր են իրականացվում Ֆրանսիայի գիտական հետազոտությունների, միջազգային գիտատեխնիկական կենտրոնի, ԱՄՆ քաղաքացիական հետազոտությունների եւ մշակումների ու գիտության եւ առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամների հետ: Կապեր են հաստատվել նաեւ ԼՂՀ ԿԳՆ-ի եւ ԳՊԿ-ի միջեւ, հայաստանյան որոշ կազմակերպությունների հետ: Քանի որ ՀՀ-ում միջուկային ֆիզիկայի բնագավառում համատեղ ծրագրեր են իրականացվում ԱՄՆ-ի հետ համատեղ, մտահոգություն հնչեց, թե հանկարծ ամերիկյան կողմից համապատասխան վերահսկողություն չլինի, որը վնասի ՀՀ-ի

շահերին: Ս. Հարությունյանը պատասխանեց. «Այդպես ասել ճիշտ չի լինի: Դեռ 90-ականներից մենք օգտվել ենք CRDF-ի տրամադրած միջոցներից, եւ չպետք է մոռանալ, որ այդ ֆինանսավորման շնորհիվ հնարավոր եղավ որոշ դեպքերում կանխել գիտական կադրերի արտահոսքը: Մյուս կողմից էլ պետական շահերին դեմ ծրագրեր, որոնք կարող են մեր պետական անվտանգությանը վնասել, մենք հաստատ չենք իրականացնի»:

Քանի որ խոսվեց միջազգային համագործակցությունից, այսպես ասած՝ դրսից համապատասխան ծրագրերի համար փողեր բերելուց, Ս. Հարությունյանին հիշեցրինք, որ հայագիտության կամ հումանիտար գիտությունների ոլորտն այստեղ նկատելիորեն անտեսվում է: Նա այսպես արձագանքեց. «Երիտասարդական ծրագրերի շրջանակներում մենք նաեւ հայագիտության ոլորտի ծրագրեր ենք ֆինանսավորում, այնպես որ, հայագիտության ոլորտը չենք մոռացել: Կոնկրետ ծրագրերի անվանումները չեմ հիշում, բայց մեր սայթում կտեղադրենք, եւ շուտով կտեսնեք: Ֆինանսավորված այդ 36 ծրագրերից 6-7-ը հումանիտար ոլորտից են: Իսկ միջազգային ֆինանսավորման ոլորտում այդ կազմակերպությունները համաձայնել են միայն բնական գիտությունների ասպարեզում մեզ հետ համագործակցել, ու դրա համար համաֆինանսավորվող ծրագրերը հիմնականում բնական գիտությունների ոլորտում են, որից հրաժարվելը անիմաստ է: Հումանիտար ոլորտը նրանց համար հետաքրքիր չէ. օրինակ՝ ամերիկացու համար հետաքրքիր չէ հայագիտությունը»: Գիտական շրջանակներում այժմ խոսակցություններ են պտտվում, թե ԳՊԿ-ն եւ ԲՈՂ-ն ունեն լուրջ հակամարտություններ: «Առավոտը» այս առիթով ստացավ պարոն Հարությունյանի մեկնաբանությունները. «Չեմ կարողանում պատկերացնել՝ ոնց կարելի է մի կառույց մյուսի հետ հակամարտություն ունենա: Եթե գոնե անձնավորելիք, ուրիշ հարց, ասելիք՝ ԲՈՂ-ի եւ ԳՊԿ-ի նախագահի միջեւ հակամարտություն՝ միգուցե հասկանալի լիներ»: Այսինքն՝ անձամբ Ս. Հարությունյանի եւ Ա. Թոչունյանի մի ջեւ կա հակամարտություն, մեր այս հարցին էլ պարոն Հարությունյանն այսպես պատասխանեց. «Ես նկատի ունեի, որ միգուցե անձնական խնդիրն ընկալելի կլիներ ինձ համար, բայց ավար դա էլ չկա: Այստեղ շահի հարց էլ չկա: Իմ հիմնական շահերը մեր պետական շահերն են, ուզում եմ, որ ՀՀ-ում գիտական աստիճան ստանան նորմալ գիտնականները, ոչ թե թույլերը: Գիտական աստիճանաշնորհման բարեփոխումները միտված են նրան, որ գիտական աստիճանաշնորհումը նորմալ ընթացք ստանա, եւ պաշտպանեն այն մարդիկ, որոնք ռեալ գիտությամբ են զբաղվում: Իմ շահը ո՞րն է, ես վաղուց գիտությունների դոկտոր-պրոֆեսոր եմ, դեռ խորհրդային ժամանակներից, երբ հայկական ԲՈՂ էլ չկար»:

ՏԱԹԵՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

### **Госкомитет науки Армении разработал проект решения правительства о создании в 2010г. 4 научных центров**

Государственный комитет науки Армении разработал проект решения правительства, согласно которому в республике будут созданы 4 научных центра. Согласно проекту решения, в 2010 г. планируется открыть центры <АрмБиотехнология>, Геофизического мониторинга, Водных проблем и гидротехники Ереванского государственного архитектурно-строительного университета, Военной медицины. Об этом заявил сегодня на пресс-конференции председатель комитета Самвел Арутюнян.

Он отметил, что первоначально центры планировалось создать в 2009 г., однако сроки были отложены из-за того, что часть бюджетных расходов 2009 г. была перенесена на 4-й квартал года. <Мы вновь располагаем средствами из госбюджета на реализацию этой программы, и в 2010 г. она будет осуществляться>, - заявил С. Арутюнян.

Напомним, в 2010 г. на сохранение и развитие научно-исследовательской инфраструктуры из госбюджета Армении предусмотрено выделить около 4,85 млрд. драмов. Объем всех бюджетных научных программ запланирован в размере 8,35 млрд. драмов.

АрмИнфо, 23.12.2009

### **Частный сектор Армении остается аутсайдером в ряду заказчиков научных разработок**

Частный сектор Армении по-прежнему остается аутсайдером в ряду заказчиков армянских научных разработок. Об этом заявил сегодня председатель Государственного комитета науки Армении Самвел Арутюнян.

<В развитых странах финансирование науки на 50 - 80% исходит от частного сектора. В нашей стране ситуация обратная - финансирует разработки и заказывает их почти исключительно государство>, - отметил С. Арутюнян. Что касается грантов, то их объем в 2010 году составит примерно 25% от объема финансирования госбюджета. <Не нужно рассматривать грантовые ресурсы как средство завуалированного управления нашей наукой. С середины 90-х до нашего времени научные программы с участием зарубежных партнеров принесли в нашу страну около 180 млн. долларов. В этой связи мне вспоминается случай. В 2000 г. я находился в командировке в США. Один из моих американских коллег в беседе со мной сказал, что посмотрел объем средств на науку из госбюджета Армении - а в тот год он составлял 4 млн. долларов. Мой коллега меня спрашивал - может, в цифре просто пропустили нули? Ему не верилось - и вполне обоснованно - что бюджет науки может быть таким маленьким. В тот же год объем грантов на научные разработки в Армении составлял примерно 7 - 8 млн. долларов, так что грантовые программы недооценивать не нужно>, - отметил С. Арутюнян.

Напомним, что в 2010 г. объем программ в области науки, финансируемых из госбюджета Армении, запланирован в размере 8,35 млрд. драмов, по сравнению с 8,37 в 2009 году.



**Հայ և ադրբեջանցի գիտնականները համագործակցում են միջազգային ծրագրերի շրջանակներում**

**ԵՐԵՎԱՆ, 23 դեկտեմբերի. /Նովոստի-Արմենիա/.** Հայ, ադրբեջանցի և վրացի գիտնականները համագործակցում են Ֆրանսիայի գիտական հետազոտությունների ազգային ինստիտուտի (CNRS) դրամաշնորհային ծրագրի շրջանակներում, չորեքշաբթի լրագրողներին հայտնեց ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

«Մա հետաքրքիր ծրագիր է, քանի որ վերջին տարիներին դժվար է պատկերացնել Հայաստանի և Ադրբեջանի համագործակցությունը հատկապես գիտական ոլորտում, սակայն այս ծրագիրն ընձեռել է այդ հնարավորությունը», - նշեց նա:

Համատեղ իրականացվող ծրագրին Հայաստանից մասնակցում է ՀՀ ԳԱԱ երկրաբանության ինստիտուտը, որին CNRS-ը և Հայաստանի գիտության պետական կոմիտեն տրամադրել է 4 հազար եվրո:

Հարությունյանը հայտնեց նաև, որ CNRS-ի հետ գործակցության շրջանակներում անցկացվել է գիտության ոլորտում երկկողմ ծրագրերի համատեղ բաց մրցույթ, որի արդյունքում ընտրվել է գիտական հետազոտությունների 9 անհատական ծրագիր Ֆրանսիայից, և միջազգային լաբորատորիաների համատեղ իրականացված երկու ծրագիր:

Համաֆինանսավորման հիման վրա անհատական ծրագրերին CNRS-ի և Հայաստանի գիտության պետական կոմիտեի կողմից հատկացվել է 5 հազար, իսկ լաբորատորիաներին՝ 8 հազար եվրո:

**Международные организации предоставили в 1994-2009 годах армянской науке гранты в размере 180 млн. долларов**

Армянская наука в 1994-2009 годах получила в виде грантов от различных международных организаций 180 млн.долларов, сообщил в среду журналистам председатель Государственного комитета по науке Самвел Арутюнян.

«Были годы, когда размер грантов полученных из-за границы превышал размер средств выделяемых науке из госбюджета», - отметил Арутюнян, приведя в качестве примера 2000-й год, когда из бюджета на науку было выделено примерно 4 млн. долларов, а в виде грантов из-за границы было получено 7-8 млн.долларов

По его словам, только со стороны Международного научно-технического центра (МНТЦ) Армении было предоставлено 38 млн.долларов, американскими организациями Фонд гражданских исследований и разработок (CRDF) и Национальный фонд науки и передовых технологий (NFSAT) - более \$ 40 млн.

При этом, Арутюнян опроверг звучащие оценки о том, что иностранная помощь армянской науке преследовала сугубо корыстные цели.

«Не надо забывать, что в те времена мы находились в более тяжелом положении, чем сейчас, и благодаря этому финансированию нам удалось сохранить определенный научный потенциал. Если бы не эта помощь , мы сейчас ничего бы не имели», - подчеркнул он.

Глава госкомитета по науке при этом добавил, что научные разработки представляющие интерес для национальной безопасности, Армения осуществляет и финансирует самостоятельно.

## **В 2010 году будет разработана 5-летняя программа по развитию арменоведения**

“Мы достигли всех поставленных в текущем году целей, несмотря на кризис. Финансирование запланированных проектов в большинстве осуществлялось благодаря грантовым программам. С 1994 года по 2009 год общая сумма полученных грантов составила более 180 миллионов долларов”, - заявил 23 декабря председатель Государственного комитета по науке при Минобразования РА Самвел Арутюнян.

По его словам, в рамках программ осуществленных в 2009 году, выделяются 3 мероприятия, направленные на “омоложение” науки: проведение молодежных школ, предоставление средств научным работникам для участия в международных научных конференциях, проведение конкурсов на получение грантов.

“За текущий год комитет профинансировал 41 научную командировку (20 млн. драмов), 20 научных конференций (10 млн. драмов), а программе 4-летних школ было предоставлено 7 млн. драмов. Кроме того, были проведены круглые столы-обсуждения, семинары, в которых участвовали госчиновники и представители научного общества”, - отметил Самвел Арутюнян.

Что касается совместных с разными международными организациями программ, он отметил, что комитет сотрудничает с Национальным Центром Научных Исследований Франции (CNRS), Международным научно-техническим центром (МНТЦ), с проекта Еврокомиссии «Черноморское сотрудничество» (BSI), Объединенным институтом ядерных исследований (JINR) и с др.

“В 2010 году мы намереваемся подписать договор о сотрудничестве с Россией, Белоруссией и Германией. Также объявим республиканские грантовые конкурсы, в которых могут принять участие и представители Нагорно-Карабахской Республики. Важно также укрепление и расширение программ в рамках «Черноморского сотрудничества» и разработка 5-летней программы по развитию арменоведения”, - заключил председатель Государственного комитета по науке Минобразования РА.



## Գիտական հիմնարկների տնտեսական ծախսերը ավելացել են

Այսօր՝ ամփոփելով 2009 թ.-ը, ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը նշեց, որ տարվա ձեռքբերումներից է գիտական փորձագիտական անկախ համակարգի ստեղծումը, որն արդեն փորձարկվել է:

«Գիտական անկախ փորձաքննության համակարգը փորձարկեցինք և՛ հայ-ֆրանսիական համատեղ ծրագրերի իրականացման համար, և՛ հայ-ամերիկյան երիտասարդական ծրագրի իրականացման ոլորտում», - նշեց Ս. Հարությունյանը և հավելեց, որ այդ գործարկումը տվել է բավականին լավ արդյունքներ:

Բանախոսը տեղեկացրեց, որ 2009 թ.-ին ԳՊԿ-ում բավականին թվով քննարկումներ, սեմինարներ են եղել, որոնց մասնակցել են պետական պաշտոնյաներ, գիտության ոլորտի ներկայացուցիչներ:

Քննարկումներից բանախոսն առանձնացրեց «Սինքրոնային ճառագայթման օգտագործման կենտրոնի «Քենդլ» նախագծի բիզնես պլանը» և Ռուս-հայկական համալսարանի հեղինակային խմբի կողմից մշակված «Կիսահաղորդիչային նանոէլեկտրոնիկայի գիտահետազոտական կենտրոնի ծրագիրը»:

Սամվել Հարությունյանը ներկայացրեց 2009 թ.-ին ԳՊԿ-ի կողմից ֆինանսավորված գործուղումները և ընդգծեց, որ, ընդհանուր առմամբ, ֆինանսավորվել է մոտ 40 գիտական գործուղում՝ տրամադրվել 20 մլն դրամ, 20 գիտաժողով՝ տրամադրվել 10 մլն դրամ և ամառային 4 դպրոց՝ տրամադրվել 7 մլն դրամ:

«Շատ կարևոր որոշում էր գիտական հիմնարկների տնտեսական ծախսերի ավելացումը, սովորաբար գիտական հիմնարկների նորմալ գործունեության համար աշխատավարձի ֆոնդը ընդհանուր բյուջեի 55-60 տոկոսը պիտի կազմի», - շեշտեց Ս. Հարությունյանը և հավելեց, որ մինչև 2009 թ.-ը գիտական հիմնարկների բյուջեի մոտ 87 տոկոսը ծախսվում էր՝ որպես աշխատավարձային ֆոնդ:

«Մեզ հաջողվեց անցյալ տարի գիտական հիմնարկների տնտեսական և այլ ծախսերը մեծացնել. Դա հնարավորություն տվեց, որ հիմնարկները շնչեն ավելի ազատ», - նշեց ԳՊԿ-ի նախագահը:

### **ԳՊԿ-ն անցնելու է գիտության ֆինանսավորման նոր ձևերի**

Այսօր ՀՀ Կրթության և գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը հանդիպեց լրագրողներին: Նա ամփոփեց Գիտության պետական կոմիտեի 2009թ.-ի գործունեությունը և խոսեց 2010թ.-ի ծրագրերի մասին:

Ս. Հարությունյանը տեղեկացրեց, որ Գիտության բյուջեն 2010թ.-ին չի կրճատվի և կլինի 8, 3 մլրդ դրամ՝ այնքան, որքան 2009թ.-ին:

Բանախոսը նշեց, որ 2009թ.-ին մշակվել են մի շարք իրավական ակտեր, որոնք ներկայացվել են Կառավարություն և գտնվում են քննարկման փուլում՝ գիտության ոլորտի զարգացման ռազմավարություն առաջիկա 10 տրվա համար, ՀՀ երկաստիճան գիտական աստիճանաշնորհման համակարգի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին նախագիծը և մի շարք այլ նախագծեր:

«Հայաստանում ձևավորվել են մի շարք գիտական կենտրոններ, որի նպատակն է կրթություն-գիտություն կապն ավելի սերտացնել՝ համակարգն ավելի ճկուն դարձնելու համար», - ընդգծեց Սամվել Հարությունյանը և հավելեց, որ 2010թ.-ին ԳՊԿ-ն անցնելու է գիտության ֆինանսավորման նոր ձևերի, որը համահունչ է համաշխարհային և եվրոպական ձևերին:

«Մեր կարևորագույն խնդիրներից մեկը եղել է գիտության երիտասարդացմանն ուղղված միջոցառումները, և, կարծում եմ, որ այս ոլորտում 2009թ.-ին լուրջ ձեռքբերումներ ունենք», - ընդգծեց Ս. Հարությունյանը:

Սամվել Հարությունյանը նշեց նաև, որ ԳՊԿ-ի ֆինանսական աջակցությամբ կազմակերպվել են երիտասարդական դպրոցներ, որոնց աշխատանքներին մասնակցել են մոտ 150 երիտասարդ գիտնականներ, ֆինանսավորվել է երիտասարդների մասնակցությունը միջազգային գիտաժողովների:

«Ամենահետաքրքիր միջոցառումներից մեկն էլ երիտասարդ գիտաշխատողների համար դրամաշնորհային մրցույթի կազմակերպումն էր», - շեշտեց բանախոսը:

## 2010 թվականին նախատեսվում է մշակել հայագիտության զարգացման 5-ամյա ծրագիր

Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանն այսօր լրագրողների հետ հանդիպման ժամանակ ներկայացնելով 2010 թվականի ծրագրերը, նշեց, որ գիտության ոլորտին պետական բյուջեից հատկացվելու է 8,3 մլրդ դրամ: «Այն ծրագրերը, որոնք նախատեսել ենք իրականացնել 2010 թվականին, լուրջ հիմքեր ունենք, որ դրանք իրականացնենք»,- հավելեց նա:

Նրա խոսքերով, ՀՀ կառավարության 2010 թվականի միջոցառումների ծրագրով սահմանված դրույթներից բացի 2010 թվականին գիտության պետական կոմիտեն նախատեսում է նաև կնքել համագործակցության պայմանագրեր Ռուսաստանի, Բելառուսի և Գերմանիայի հետ:

Սամվել Հարությունյանը նշեց, որ եկող տարի նախատեսվում է հայտարարել հանրապետական դրամաշնորհային մրցույթներ, որոնց կմասնակցեն նաև Ղարաբաղի գիտնականները:

Նա նշեց, որ եկող տարի մտադիր են սերտ գործունեություն ծավալել Սևծովյան համագործակցության շրջանակներում: Սերտ համագործակցություն է նախատեսվում «Քենդլ» ծրագրի շրջանակներում:

Գիտության պետական կոմիտեի նախագահի խոսքերով, 2010 թվականին նախատեսվում է մշակել հայագիտության զարգացման 5-ամյա ծրագիր և գիտության ոլորտի ռազմավարության 5-ամյա ծրագրեր:

Կոմիտեն նաև նախատեսում է գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի հետ համատեղ ընդգրկվել միջազգային գիտատեղեկատվական ցանցում:

**Ս. Հարությունյան. Այս տարվա կարևոր նվաճումը գիտական փորձագիտական անկախ համակարգի ձևավորումն էր**

Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը նշեց, որ այս տարվա կարևոր նվաճումը գիտական փորձագիտական անկախ համակարգի ձևավորումն էր, որի շրջանակներում իրականացվել են բազմաթիվ աշխատանքներ:

Նա նշեց, որ այս տարի իրականացվել է ՀՀ գիտական կազմակերպություններում և բուհերում աշխատող գիտնականների տվյալների հավաքագրում, մուտքագրում, կոդավորում, տվյալների շտեմարանի ստեղծում:

Նրա խոսքերով, այս տարի շտեմարանում ընդգրկված են ավելի քան 5000 գիտնականների տվյալներ:

Ս. Հարությունյանը հայտնեց, որ այս տարի ստեղծվել է արտասահմանում աշխատող հայ գիտնականների տվյալների շտեմարան, որտեղ ընդգրկված են ավելի քան 1000 գիտնականների տվյալներ: Այս տարի կիրառվել է նաև գիտական փորձագիտական անկախ համակարգը, որը տվել է լավ արդյունք:

Կոմիտեի նախագահը նշեց, որ կոմիտեում կազմակերպվել են տարբեր թեմաներով քննարկումներ, կլոր սեղաններ, սեմինարներ, որոնց մասնակցել են պետական պաշտոնյաներ, գիտական հանրության և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Մասնավորապես, կոմիտեում ներկայացվել է Ազգային մրցունակության 2009 թվականի ծրագիրը, «Մինքրորոնային ճառագայթման օգտագործման կենտրոնի «Քենդլ նախագծի բիզնես-պլանը» և Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի հեղինակային խմբի կողմից մշակված Կիսահաղորդչային նանոէլեկտրոնիկայի գիտահետազոտական կենտրոն ծրագիրը և այլն:

Նրա տեղեկացմամբ, այս տարի ընդհանուր առմամբ կոմիտեի կողմից ֆինանսավորվել է 41 գիտական գործուղում, որի համար կոմիտեի բյուջեից տրամադրվել է 20 մլն դրամ, այս տարի մոտ 20 միջազգային մակարդակի գիտաժողովների կազմակերպման համար կոմիտեի բյուջեից տրամադրվել է մոտ 10 մլն դրամ ֆինանսական աջակցություն:

Սամվել Հարությունյանի տեղեկացմամբ, այս տարի կոմիտեն ֆինանսավորել է Հայաստանում 4 ամառային դպրոց , որի համար տրամադրվել է մոտ 7 մլն դրամ:

Կոմիտեի նախագահի խոսքերով, շատ ողջունելի է, որ այս տարի ավելացվել են գիտական հիմնարկների տնտեսական ծախսերը:



## **Տարվա կարևոր հարցերից է եղել գիտության երիտասարդացման խնդիրը**

Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանն այսօր ամփոփելով 2009 թվականին գիտության ոլորտում կատարված աշխատանքները նշեց, որ պլանավորված գրեթե բոլոր աշխատանքները հասցրել են իրականացնել:

Նրա խոսքերով, այս տարվա կարևոր հարցերից է եղել գիտության երիտասարդացմանն խնդիրը, որի համար այս տարի կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ և ունեն լուրջ ձեռքբերումներ:

Նա նշեց, որ կոմիտեի ֆինանսական աջակցությամբ, այս տարվա ընթացքում կազմակերպվել են մի շարք երիտասարդական դպրոցներ, որոնց մասնակցել են ավելի քան 150 երիտասարդ գիտնականներ: Մի քանի երիտասարդ գիտաշխատողների տրվել է ֆինանսական աջակցություն՝ միջազգային գիտաժողովների մասնակցելու համար:

Նրա խոսքերով, այս տարվա կարևոր ծրագրերից է երիտասարդ գիտաշխատողների համար դրամաշնորհային մրցույթի կազմակերպումը, որի ամփոփումը եղել է երեկ:

Սամվել Հարությունյանն նշեց, որ մրցույթի արդյունքում եկող տարի նախատեսվում է 20 ասպիրանտական ծրագրեր ֆինանսավորել մեկ տարվա ծրագրի շրջանակներում: Կֆինանսավորվի նաև 17 թիմային ծրագիր՝ գիտության բոլոր ոլորտներից:

Նրա տեղեկացմամբ, այս տարի երիտասարդ գիտաշխատողների համար դրամաշնորհային մրցույթին մասնակցել են մինչև 35 տարեկան ասպիրանտներ, գիտնականներ և մագիստրոսներ:

«Գիտաշխատողների համար դրամաշնորհային մրցույթի կազմակերպումը շատ կարևոր էմ համարում, քանի որ մեզ մոտ գիտության ծերացում է նկատվում և նմանատիպ ծրագրերի իրականացումը կնպաստի, որ երիտասարդները զբաղվեն գիտությամբ», - հավելեց նա:

### Գիտության պետական կոմիտեում բեղուն տարի է եղել

Գիտության պետական կոմիտեն այս տարի համագործակցել է մի շարք միջազգային կառույցների հետ և ձեռք է բերել բազմաթիվ պայմանավորվածություններ, այդ իսկ պատճառով այս տարին կարելի է բեղուն տարի համարել: Այս մասին այսօր ասուլիսում ասաց Գիտության պետական կոմիտեի նախագահ Մամվել Հարությունյանը:

Նա տեղեկացրեց, որ Ֆրանսիայի գիտական հետազոտությունների ազգային կենտրոնը /CNRS/ այս տարի հունվարի 20-ին կնքվել է համագործակցության համաձայնագիր ՀՀ ԿԳՆ-ի և Ֆրանսիայի գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի միջև, որի շրջանակներում անցկացվել է գիտական հետազոտությունների ոլորտում երկկողմ գործակցության ծրագրերի բաց մրցույթ:

Մրցույթի արդյունքում ընտրվել են ինը երկկողմ փոխգործակցության, երկու միացյալ միջազգային լաբորատորիաների և մեկ գիտահետազոտական խմբի կազմավորման ծրագրեր:

Մամվել Հարությունյանը նաև տեղեկացրեց, որ միջազգային գիտատեխնիկական կենտրոնի /ՄԳՏԿ/ կողմից այս տարվա ընթացքում հավանության են արժանացել շուրջ 1 մլն 200 հազար ԱՄՆ դոլար արժողությամբ ՀՀ-ից ներկայացված ծրագրեր: Այս տարի ապրիլի 1-ին ստորագրվել է նաև փոխըմբռնման հուշագիր` ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի միջև ՀՀ տարածքում իրականացվող «կանոնավոր» նախագծերի համաֆինանսավորման մասին:

Գիտության պետական կոմիտեի նախագահի փոխանցմամբ, այս տարի ԱՄՆ քաղաքացիական հետազոտությունների և մշակումների հիմնադրամի /CRDF/, Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի /NFSAT/ հետ այս տարի կնքվել է համատեղ գործունեության պայմանագիր` ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի միջև, համաձայն որի ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն, Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամը և այս տարի սեպտեմբերին «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր-2009»-ի շրջանակներում հայտարարել են երիտասարդ գիտաշխատողների համատեղ մրցույթ: Արդյունքում` համատեղ ֆինանսավորվելու են 11 ասպիրանտական և 8 խմբային ծրագրեր, իսկ ԳՊԿ-ի կողմից առանձին` 9 ասպիրանտական և 8 խմբային ծրագրեր:

Նա նաև նշեց, որ այս տարի կնքվել է համագործակցության համաձայնագիր` ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և «Տրանսֆեր տեքնոլոջի» ասոցիացիայի միջև, որի արդյունքում կազմակերպվել են կլոր սեղաններ, քննարկումներ:

Մամվել Հարությունյանը նշեց, որ այս տարի համագործակցության համաձայնագիր է կնքվել է նաև «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հետ, որի արդյունքում համատեղ կազմակերպվել է երիտասարդական աշնանային դպրոց:

Մամվել Հարությունյանը շատ կարևորեց, որ այս տարի ստորագրվել է համագործակցության

պայմանագիր կոմիտեի և ԼՂՀ կրթության և գիտության նախարարության միջև: Նա մանրամասնեց, որ համագործակցության պայմանագիր շրջանակներում նախատեսվում է իրականացնել բնագիտական, տեխնիկական և հումանիտար գիտությունների բնագավառներում իրագործվող հիմնարար, կիրառական բնույթի համատեղ աշխատանքներ, համատեղ ֆինանսավորել անկախ փորձաքննության արդյունքների հիման վրա մրցութային հիմունքներով ընտրված գիտական հետազոտությունների նախագծեր, աջակցել երիտասարդ գիտնականների կողմից իրականացվող գիտահետազոտական աշխատանքներին, կադրերի վերապատրաստմանը, համատեղ անցկացնել գիտաժողովներ, դասընթացներ, սեմինարներ և այլ գիտական միջոցառումներ:

Նա նաև տեղեկացրեց, որ այս տարվա ընթացքում սերտ համագործակցություն է ծավալվել նաև Ռուսաստանի Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի հետ: Նա նշեց, որ մասնավորապես քննարկվել և մշակվել է Երևանում ինովացիոն կենտրոն ստեղծելու ծրագիրը և որոշվել է տարեկան 2 ասպիրանտ և մագիստրոս գործուղել Դուբնա՝ հետազոտություններ իրականացնելու համար:

## **ФИНАНСИРОВАНИЕ НАУКИ В АРМЕНИИ В 2010-М НЕ БУДЕТ СОКРАЩЕНО И СОСТАВИТ 8,2 МЛРД. ДРАМОВ –ГОСКОМИТЕТ ПО НАУКЕ**

ЕРЕВАН, 23 декабря /. На финансирование науки в Армении в 2010-м будет выделено 8,2 млрд. драмов, как и в 2009 году, сообщил в среду журналистам председатель Государственного комитета по науке Самвел Арутюнян подводя итоги года.

«Это внушает надежду, что все запланированные программы в 2010-м будут выполнены», - отметил он, добавив, что благодарен президенту и премьер-министру за то, что в условиях финансово-экономического кризиса финансирование науки не сократилось.

Глава госкомитета подчеркнул, что в 2010 планируется перейти к грантовой системе финансирования науки, а в конкурсах смогут принять как ученые из НКР, так и из диаспоры.

Арутюнян также сообщил, что среди планов Госкомитета по науке в следующем году - продолжение научного и научно-технического сотрудничества с научными учреждениями других стран и международными организациями, создание в Армении научных центров, а также продолжение усилий по «омоложению» науки в Армении и созданию независимой системы научной экспертизы, в которую будут включены как армянские, так и иностранные специалисты.

По словам Арутюняна, в 2010 планируется наладить еще более тесное научное сотрудничество с Россией, особенно в области фундаментальных исследований, а также с Беларусью и Германией.

Кроме того, предусматривается продолжение сотрудничества с Международным научно-техническим центром (МНТЦ), с Национальным институтом научных исследований Франции (CNRS), с Фондом гражданских исследований и разработок (CRDF, США) и Национальным фондом науки и передовых технологий (NFSAT, США), а также присоединение армянских научных центров к системе GRID Черноморского сотрудничества (BSI), куда включены 240 научных институтов региона. (\$1-374.46).